ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2018 թվականի մարտի 12-ին տեղի ունեցավ 7-րդ «բ» դասարանի հերթական ծնողական ժողովը,որին ներկա էին 19 ծնող,բացակա՝ 4 ծնող:Ժողովը վարում էր դասղեկ Վարդիթեր Քոչարյանը:

Օրակարգում՝

1)Աշակերտների ընթացիկ առաջադիմության և ուսումնական դժվարությունների հաղթահարման հարցը:

2)Ընթացիկ հարցերի քննարկում:

Լսեցին՝

1)Աշակերտների ընթացիկ առաջադիմության և ուսումնական դժվարությունների հաղթահարման հարցը:

Դասղեկը ներկայացրեց ծնողներին 7-րդ դասարանի աշակերտներին ուղղված պահանջները, ուսումնական գործընթացի դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները՝ կապված տարիքային առանձնահատկությունների հետ: Ծնողները մտքեր են փոխանակում ինչպես միմյանց ,այնպես էլ դասղեկի հետ:

Դասղեկը ծնողներին ծանոթացրեց այն խնդիրներին , որոնք կարող են կապված լինել երեխայի վաղ դեռահասության տարիքային փոփոխության հետ: Նա նշեց, որ պահվածքի և վարքի վրա պետք է ուշադրություն դարձնել.

ա)երեխայի ռեժիմի փոփոխությունները, ֆիզիկական և մտավոր ծանրաբեռնվածության մեծացում,

բ)երեխաների ֆիզիոլոգիական հասունացում,

գ)երեխայի ինքնուրույնության ձգտումը և դրան չխոչընդոտելը:

Որոշեցին՝

Աշակել մի շարք կանոններ , որոնք կարող են օգնել ծնողներին նախապատրաստել երեխային ինքնուրույն հաղթահարելու տարիքային, ուսումնառության ընթացքում ծագած խնդիրները:

Լսեցին՝

2. Ընթացիկ հարցեր:

Քննարկվեցին ընթացիկ հարցեր՝ կապված առաջադիմության և կարգապահության հետ: Ընդհանուր առմամբ երեխաները կարգապահ են, բայց պետք է ուշադիր լինել ցանկացած պահի: Ծնողներին նաև ասվեց ,որ պետք է ավելի ուշադիր լինել երեխաների սովորելուն, կարգապահության և վարքի նկատմամբ, որ կարողանան իրենց առաջադիմությունն ավելի բարձրացնել:

Երկրորդ կիսամյակը մտել է ընթացքի մեջ: Շուտով կսկսվեն գարնանային արձակուրդները: Աշակերտները իրենց ուսումնական հաջողությունները մինչև տարեվերջ զարգացնելու խնդիր ունեն և ծնողները պետք է բազմապատկեն իրենց ուշադրությունը, որպեսզի նրանք չծուլանան և չթերանան դասերին պատրաստ ներկայանալու, չբացակայելու հարցում: Բոլոր ուսուցիչները և դասատուները անում են ամեն ինչ, որ աշակերտները արդյունավետ աշխատեն և հանկարծ չթուլանան:

Որոշեցին՝

Ավելի հետևողական լինել, որ երեխաները լինեն կարգապահ ու բարձր առաջադիմություն ապահովվեն:

Ծնողական խորհրդի նախագահ՝ / Լիլիկ Հովհաննիսյան

Քարտուղար՝ / Անի Դավթյան